Արձանագրություն N 4
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (e-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 9 սեպտեմբերի 2026թ.
Ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Ղևոնդյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Ա. Գրիգորյան
	Մ. Մելիքսեթյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Լ. Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Մկրտչյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Կ. Ղևոնդյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 :

2. ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով հայտերի բացման մասին
(Կ. Ղևոնդյան)

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով: Գնման ընթացակարգի աճուրդը մեկնարկել է 2026 թվականի սեպտեմբերի 7-ին՝ ժամը 15:15-ին և ավարտվել է 2026 թվականի սեպտեմբերի 7-ին՝ ժամը 15:45-ին:

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Ղափանցյան փ. 3, Հեռ.՝ +37477-567-260, info@art-group.am

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Կ. Ղևոնդյան)

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում Հրավերով սահմանված փաստաթղթերը թերի են՝ չեն համապատասխանում հրավերի պահանջներին (հրավերով սահմանված փաստաթղթերն առկա չեն):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Կ. Ղևոնդյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն՝ վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը:

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ (eauction.armeps.am) համակարգի միջոցով, մինչև 11.09.2026թ. ժամը 17:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

(Կ. Ղևոնդյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17** ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2026 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 17:00-ին, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

նախագահ՝ Կ. Ղևոնդյան

գնահատող անդամներ՝ Ա. Գրիգորյան

Մ. Մելիքսեթյան

բացող անդամներ՝ Լ. Ղազարյան

քարտուղար՝ Ս. Մկրտչյան